


ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

Տարեկան գին և Պատկերներ 8 ՄԷԸ:
Պատկերներ 40 ՄԷԸ:
Վեցամսեայ և Պատկերներ 4 ՄԷԸ:
Պատկերներ 5 ՄԷԸ:
Երկամսեայ թերթի գին 60 փոյ:
Մանուկներու տոգը մէկ անգամի հա-
մար 3 դոնտէ, երկու անգամի հա-
մար 2 դոնտէ, անկէ անգամներու
համար դոնտ սակարկութիւն կրկնայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ 27 ՅՈՒՆԻՍ

ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 6 օգոստոս

Երեսօրհանաց խորհրդարանին մէջ
եկեղեցական արարողութեանց վրայ ա-
ռաջարկեալ օրինակքն քննութեան առ-
թիւ Պ: Տնարայէի ըստ թէ իր արդէն
յայտնած կարծիքն առեւ ըստ իր արդէն
պիւ. կրկնել կուզէ, այսինքն, թէպէտ իւ-
րոպա, բայց ի դժբաղդ երկրէ մը: (Սպա-
նիա), խոր հանդարտութեան մէջ է,
սակայն այնպիսի ազդեցութիւնը կան,
որք տալապէն մէջ մեծ խռովութիւն
ներ յայտնուեալ կուտան Պ: Այլապէս
ալ հաստատեց այս կարծիքը:

Փարիզ 4 օգոստոս

Միտպետական յազմանքը վերադա-
տեալ անպատահաւ կերպիւ:

Փարիզ 5 օգոստոս

Մար—Մարտի մարտիկներն իր անձ-
նապահ սպաներէն (եղբայր) մին իջեցու-
տի խոթովն զխնամարտութեան զրկեց և ա-
նոր տրամադրութեան ներքե կրաւ:
Ազգային ժողովը նոր հարկեր սահմա-
նելու առաջարկութիւնները չընդունեց:
Վիճարանութիւնը հանդարտութեամբ կը
շարունակեն: Հանրապետականը ամբողջ
են ժողովին մէջ, բայց թագաւորականը
սակաւաթիւ:

Օրէնսդէանը կը պահանջեն որ Պ: Բու-
նէ և Բատուայի դուքսը դատաւարանի են-
թարկին:

Մտորտ 5 օգոստոս

Երեւոյններն և քաղաքական ակումբ-
ները կը յայտնեն թէ մինչեւ որ Բարդու-
եանը ի սպաս չյաջիւնան, երեսօրհա-
նաց ժողովը գտնաբեր անհնարին է:

Երեւոյն լրագիրը կառավարիչ Աւստ-
րիոյ որ եւրոպական ակումբ հանդի-
մը գումարով Ստանիսլ մէջ քաղաքային
պատանդութիւնը դադարեցնէ, և ազգին հը-
րաւեր կարգաւորութիւնը վերջնական
էջով մի րոպէս կառավարական ձեւը
յայտնէ:

Փարիզ 4 օգոստոս

Ազգային ժողովը Գաղղիոյ Պանդային
հետ 80 միլիոն ֆրանքի նոր փոխառու-
թիւն մընկելու նպատակաւ առաջարկեալ
պայմանագրութիւնն ընդունեց: Եւրոպ
1875 տարեայն երեւոյնը հարկեցոյցն ըն-
դունեց, անհրաժեշտ տրոյ վրայ մէկ տաս-
նորդ աւելցնելու խնդիրը մերժելով:

Լոնտրա 6 օգոստոս

Միջերկրական ծովու անդղիական նա-
ւարկութիւնը Սպանիոյ ջուրերն երթալն ետ
մնաց:

Պոլսէ 6 օգոստոս

Պոլսէ 6 օգոստոս լրագիրը Բուսի-
նիոյ Գարատաղի և Սելվիոյ մէջ Արեւելից
խաղաղութիւնը վրդովեալ կարգ կար-
գադրութիւն մը կը քննարկէ: Եւրոպ
հանգում, Բուսինիոյ դարձականաւ ըմ-
թուրցա իշխանին ուղեւորութեան վրայ
բացատրութիւններ կուտայ:

Լոնտրա 6 օգոստոս

Պոլսէ Բոնա 43 11/16

Իոն 1865 —
» 1869 52 3/4
» 1871 64 1/2
» 1872 74 1/2
Անդր Բոնա 92 1/2
Լիւկերնու 6 օգոստոս
Բաւարի Միտրիկ—Օրէն 8 3/8
» Ֆար Զոլերա 5 3/8
Ֆարաւ 45000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ: Դրան լրագրական դիւանին
երկրորդ անօրէն (միտրիկ) Մէհմետ
Էֆենտին առաջին անօրէն անուանե-
ցաւ փոխանակ Տէքէնտա Էֆենտին,
որ հրաժարական տուած էր:

Իոն լրագրական դիւանին տես-
չութիւնը ըստ առաջնայն կայսերու-
կան Տիւրքիոյ առաջին թարգման
Միտրիկ պէյին վրայ է:

Մարտի քաղաքին անգղիական
դեսպան Վիսմ. Սըր Էֆենդի Էֆեն-
տին չինգաթի իրիկուն ճաշ մը տուաւ
Բ: Դրան Արտաքին գործոց նախա-
րար Վիսմ. Մարիֆի փաշային և օ-
տար տէրութեանց դեսպաններուն:

Շուիային գործոց նախարարու-
թեան կողմէ գնուած երեք շոգե-
նաւներն Աղիդիէ ընկերութեան տըր-
ւեցան, և անուանին Բուսուդա, Մար-
մարա և Դայսէրի դուրեցաւ:

Ալիդիէն Տրիպոլիոյ պաշտօնա-
կան լրագիրը կը քննարկէ թէ Պէն-
կաղիէն եկած լուրերուն նայելով
Մէրճի նահանգին մէջ ժամաւայտն
օրէ օր նուազելու վրայ է:

Աղիդիէ ընկերութեան Թէքլի-
տայ բանալ Սալիֆ Էֆենտին շոգե-
նաւն ալ իր Թէքլիտայէն Կ: Պոլս
եկած ժամանակ Էֆենտին առջեւ քա-
ղաքը մը կը խորհէ, և օգնութեան
դրկուած շոգենաւները չեն կրցեր ա-
ղաքել: Հետեւաւոր մէջ Դանա-
պարհօրէններն Էֆենտին հանուեր
շոգենաւով Կ: Պոլս բերուեր են:

Մարտիկայէն հանքային ածուխ
բուսնաւով Կ: Պոլս եկող Չէֆիւրո ա-
նուն խոտրական նաւ մը երեք շաբաթի
օրը Պէյիւն Զէքէֆէի առջեւ հա-
սած ժամանակ, մէջի ածուխը բը-
ռնկեցաւ: Անմիջապէս անգղիական
շոգենաւ մը դայն քաշելով Մար-
թաքի առջեւ բերաւ, և չորս հինգ
ժամ աշխատելէ ետեւ մէջի հրդեհը
յաջողեցան մարել առանց մեծ վնաս
մը ըլլալու:

Էյուս քնակեալ աղքատ թրքու-
հի մը տանը ծախքերուն հասնելու
համար, որովհետեւ երկրէ չէր կրնար
հասնիլ, լուսարարութիւն կրնար ա-

ռանց երկանն խնայելու:
Ասիէց քանի մ'օր առաջ երբոր
լուսնուած ճերմակեղէնի ծրար մը
կուտար իր յաճախորդներէն մէկուն,
այլը որ Տէրփիլ մէ, յանկարծ վը-
րայ կուգայ, և կնոջն օտարական
մարդու մը հետ խօսակցելը տեսե-
լով, այն պատճառ կը կատարէ, որ
գրպանէն դանակ մը հանելով կնոյ
կը շարնէ կը վիրաւորէ, յետոյ մար-
դուն կը դառնայ և դայն ալ թեթեւ
կերպիւ կը վիրաւորէ:
Մարտիկայէն Տէրփիլն անմիջա-
պէս բռնուելով օտարականութեան դու-
ռը բանտարկեցաւ:

Լա Թիւրքի մէջ կը կարգանք
թէ անցեալ օր Հայ մը խաղաղի
դերեղմանոցին մէջ Հրեայի մը հան-
դիպելով դայն բռնեւ և վրան դու-
նուած 12 սակին կողպուեր է:

Յիշեալ հայադղին անմիջապէս
բռնուելով, կողպուած սակները
ձեռքէն առնուեր ու տիրոջը տըր-
ւեր են:

Չորեքշաբթի օրը Գէհաւախանէի
մօտ Սիւննէթ—քէօրիւսի ըստած
կամուրջին քով սպանեալ մարդու մը
գլխի գտնուեցաւ:

Հինգշաբթի օրը ձիապիւի և Ֆե-
նէրի մէջ տեղը ծովեղբերայ գործա-
րանի մը մէջ հրդեհ պատահելով,
գործարանն ամբողջապէս այրեցաւ:

Պոստայի լրագիրը կը ծանուցանէ
թէ խոշոր կարիւրաւոր հեղեղանման
անձրեւ մը մեծ վնասներ գործեւ է
Թրակիոյ շրջանները: Գլխաւորա-
պէս Տօմինէ դիւղաքաղաքին տու-
ներուն մէջ քառորդը քչեր տարեր
է և քանի մ'ալ հողի մեռեր են:

Թօմիքարուի շրջանները բնակ-
եալ Ապաուլա հանուն Արաք մ'առ-
կէց տանները տարի առաջ փողոցի
մը մէջ 4—5 տարեկան յոյն տղիկ մը
գտնելով առեր իր տունը տարեր
և ամենական կրօնի մէջ մեծցու-
ցեր էր:

Չորեքշաբթի օրն յիշեալ աղան
որ հիմա 18 տարեկան էր, սպանե-
ւած գտնուեցաւ իր սենեկին մէջ:
Ոստիկանութիւնն Ապաուլա հին վը-
րայ կասկածելով բանտարկեց դայն,
և գործը կը ըննուի:

Եանեայէն յուլիս 24 թուով հե-
տեւալ կը գրեն:

Անցեալ շաբթու արիւնուշա
անց մ'անցաւ Եանեայի բանտ-
րուն մէջ: Տասն և մէկ սփառաբոյժ,
որ ին և նոյն բանտի մէջ փախուած
էին, փախչելու խորհուրդ կրնեն, և
այս նպատակաւ կէս զիշերին միջոց-

ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

Գուրո գացած լրագրաց ճանր
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագր-
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չիքիլի խան, Մաքիսի գրասեն-
եակը:
Ճամբու ծախքը չվճարուած նո-
յակ չընդունուիր:

նեքը գործարանի աղմուկ մը կը յա-
րուցանեն բանտին մէջ: Երբոր բան-
տայանքներու կը մանէ ժխորին պատ-
ճառն հասնելու, բանտարկեալը
վրան կիցնան կ'ապանեն, և իրենք
փախչելու կաշխատին: Բանի մը պա-
հապան ղինուորք վրայ կը հասնին և
բանտարկեալներն արգելուր կը ջա-
նան: Այս կռուին մէջ երկու բան-
տարկեալ և երկու ղինուորք կը վի-
րաւորին:

«Վերջապէս կուտակին իմանալով
խումբ մը ղինուորով հոն կը հասնի
և փախստեայ շարագործները կը
բռնէ բաց յերկուքէն» որք հետեւ-
եալ օրը կը բռնուին: Այս վերջին-
ները բռնուած ժամանակին դա-
նակով երկու ղինուոր վերաւորեցին:
այն ժամանակ ղինուորներն ալ ղէն-
քերին գործածելով շարագործնե-
րէն մին ծանրապէս վիրաւորեցաւ և

ԵՅԻ ԵՅԻ Բ

Վերեալիկ մէջ այս օրերս ամե-
նուն զարմանաց և խօսակցութեան
նիւթ եղած է իննսուն տարեկան
մայրապետի մը ակումբներուն նորէն
բռնելը: և առեւ զարմանալին այս
է որ յիշեալ միանձնուհին 47 և 63
տարու եղած ժամանակն ալ ակում-
ները նորէն բռնեւ են: Հետեւաւոր
այս հինգերորդ անգամն է որ յիշ-
եալ կնոջն ակումբները բռնութենէն կը
նորոգին:

Ամերիկայի մէջ այս օրերս թո-
քալտի և արեան տաղութեան յա-
ռաջ եկած հիւանդութեանց բժշ-
կութեան համար արշաւներու տաք
արիւն խմբերու դրութիւնը գործա-
ծիլ սկսած է, որը Տօմիքարու Բաքալ
անուն բժիշկի մը գտած է, և անգ-
ղիական լրագրի մը խօսքին նայելով
արդէն շատ հիւանդներ բժշկուեր
են: Բայց որովհետեւ տաք տաք ար-
իւն խմբին ամեն ստամոքսի գործ է,
Տօմիքարու Բաքալ հնարք մը գտեր է
արշաւոց արիւնը չորցնելով փոշի ը-
նելու և այնպէս հիւանդաց կերպը-
նելու: Այս փոշոյն գործածութիւ-
նը ընդհանրապէս սկսեր է Ամե-
րիկայի մէջ վերադառնալ հիւանդու-
թեանց դէմ:

Անգղիոյ լրագիրները պատրու-
թեան պաշտօնարաններէն պօքոսա-
յէն և դատարաններէն շուտով լուր
ստանալու համար աղաւնիներ կը
գործածեն: Իրենց լրագրները վան-
դակ ի ձեռնին, որպէս մէջ երկու երեք
աղաւնի կը գտնուին միշտ, դատա-
րաններն ու պաշտօնարանները կեր-
թան, և ստացած լուրերնին աղաւ-
նիներէն մէկուն ստոր կը կապեն և

